



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



Ա. Միկոյան 109/8
(Դավթաշեն, 4-րդ թաղամաս)
Երևան 0054






www.rescue.mia.gov.am



mia@gov.am



Հայաստանին սպառնացող աղետների վերաբերյալ վարքականոնների ուղեցույց





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	3
ԶՐԸԵՂԵՂ	5
ՔԱՐԱԹԱՓՈՒՄ	9
ՍՈՂԱՆՔ	11
ԵՐԿՐԱՇԱՐԺ	13
ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՐԴԵԸ	19
ԶՆԱԲՈՒՔ	23
ՍԵԼԱՎ	27
ԿԱՅԾԱԿ	31
ԿԱՐԿՈՒՏ	34
ՈՒԺԵՂ ՔԱՄԻ	37



Աղետները չեն բացահայտում բնության քմահաճությունները, այլ՝ մարդկանց անկարողությունը դրանց դիմակայելու:

Բեռնարդ Շոու

Բնությունը ոչնչով մեղավոր չէ, երբ մարդիկ կառուցում են իրենց տները վտանգավոր վայրերում:

Ժան-ժակ Ռուսո

Աղետները մեզ ցույց են տալիս, թե որքան ուժեղ ենք, քանի որ յուրաքանչյուր կործանումից հետո մենք ավելի դիմացկուն ու ավելի զորեղ ենք դառնում:

Ֆրիդրիխ Նիցշե





ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանը, իր բնական պայմաններով, դիրքով պարբերաբար ենթարկվում է տարբեր բնական երևույթների, որոնք կարող են լուրջ սպառնալիք ներկայացնել երկրի բնակչության անվտանգությանը: Մեր երկրի աշխարհագրությունը, լեռնային տարածքները և փոփոխվող եղանակային պայմանները նպաստում են աղետների առաջացմանը, որոնք կարող են խաթարել բնականոն կյանքը, իլել մարդկային կյանքեր և պատճառել զգալի վնասներ տարբեր ոլորտներում:

Աղետների կանխարգելումը, դրանց վաղ ազդարարումը և աղետների հետևանքների արդյունավետ վերացումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ մենք լիովին գիտակցում ենք մեր առջև ծառայած սպառնալիքները և համապատասխան պատրաստություն ձեռք բերում՝ ամենաբարդ ու անկանխատեսելի իրավիճակներին դիմակայելու համար:

Վարքականոնների ուսուցումն ու ճիշտ տեղեկատվության տրամադրումը կենսական նշանակություն ունեն, քանի որ ապահովում են, որ մարդիկ լիովին գիտակցեն, թե ինչպիսի գործողություններ պետք է իրականացնեն տարբեր աղետների և արտակարգ իրավիճակների ժամանակ:

Իրազեկվածությունը և պատրաստվածությունը դառնում են այն հիմնարար գործոնները, որոնք հնարավորություն են տալիս արագ և ճիշտ արձագանքել աղետներին, ճիշտ որոշումներ ընդունել և էապես նվազեցնել դրանց բացասական հետևանքները՝ այդպիսով խնայելով մարդկային կյանքեր և պահպանելով հասարակության անվտանգությունը:

Այս ուղեցույցը մշակվել է բնակչության համար՝ տրամադրելով պարզ, հասկանալի և գործնական խորհուրդներ, թե ինչպես պետք է պատրաստվել և ճիշտ գործել այնպիսի աղետների դեպքում, որոնք կարող են սպառնալ մեր երկրին և բնակչության անվտանգությանը:



ՋՐ ՀԵՂԵՂ

Ջրհեղեղը ցամաքի զգալի տարածքների ժամանակավոր ջրածածկումն է գետերում, լճերում, ջրամբարներում, ծովերում ջրի մակարդակի բարձրացման հետևանքով:

Լինելով հիդրոլոգիական վտանգավոր երևույթ՝ ջրհեղեղները դասվում են խիստ տարածված, հաճախակի կրկնվող տարերային աղետների թվին և իրենց պատճառած մարդկային ու նյութական կորուստների տեսակետից առավել վտանգավոր են:

ՀՀ-ում աղետալի ջրհեղեղներ են եղել 1936, 1938, 1948, 1951, 1953, 1956, 1963, 1968, 2024 թվականներին:

Ջրհեղեղի առաջացման պատճառները

- հորդառատ տեղումներ
- ձնհալք
- պատվարների փլուզում



Ինչպե՞ս նախապատրաստվել ջրհեղեղին

- Խոսե՛ք ձեր ընտանիքի անդամների հետ ջրհեղեղների և դրանց առաջացման պատճառների մասին:

Անվտանգության պլան կազմե՛ք: Գտե՛ք տարահանման անվտանգ երթուղի, որով կարող եք անցնել ջրհեղեղի դեպքում ձեր ընտանիքի հետ: Միասին որոշե՛ք միմյանց կորցնելու դեպքում ձեր հանդիպման վայրը:

- Պատրաստե՛ք «արտակարգ իրավիճակների կապոց», որը կներառի՝

- չփչացող մթերք,
- դեղամիջոցներ,
- առաջին օգնության արկղիկ,
- լապտեր,
- մարտկոցներ,
- ջուր մի քանի օրվա համար, եթե անհրաժեշտություն լինի լքելու ձեր տարածքը կամ ծառայությունները չգործեն:



- Մի՛ մտեք ջրհեղեղի կամ սելավի ջրերի մեջ, նույնիսկ եթե դրանք մակերեսային են թվում: Ջրհեղեղների ժամանակ մահերի մեծ մասը ջրահեղձման հետևանքով է:

- Պահե՛ք կարևոր փաստաթղթերը, օրինակ՝ նույնականացման քարտը, կա՛մ բարձր տեղում, կա՛մ , այնպիսի վայրում, որը կարող է պաշտպանել դրանք ջրից վնասվելուց (օրինակ՝ փակվող պլաստիկ տոպրակի մեջ), որպեսզի նվազագույնի հասցվի վնասը:



Ի՞նչ անել ջրհեղեղի ժամանակ

Հետևե՛ք տեղական իշխանությունների հայտարարություններին: Հետևե՛ք նորություններին՝ ռադիոյով, հեռուստատեսությամբ կամ առցանց հարթակներում: Եթե ձեզ խորհուրդ են տալիս տարահանվել, անմիջապես վերցրե՛ք ձեր արտակարգ իրավիճակների կապոցը և նույնականացման փաստաթղթերը: Եթե արագ արձագանքման ծառայությունները պատնեշներ են տեղադրել, մի՛ փորձեք շրջանցել դրանք, քանի որ դրվել են մարդկանց վտանգավոր տարածքներից հեռու պահելու համար:

Ապահովե՛ք ձեր տան անվտանգությունը: Տնից դուրս գալուց առաջ անջատե՛ք սարքերը, էլեկտրականությունը, գազը, ջուրը և այլն, եթե ունեք ժամանակ, և դա անելն անվտանգ է:



Տեղափոխվե՛ք բարձրադիր վայր: Կանգնած, հոսող կամ բարձրացող ջրից խուսափելու համար տեղափոխվե՛ք բարձրադիր վայր: Մի՛ փորձեք քայլել, լողալ կամ մեքենա վարել արագ հոսող հեղեղի միջով: Եթե ձեր մեքենայի մեջ եք, և այն լցվում է ջրով, բարձրացե՛ք մեքենայի վրա:

Եթե փակված եք շենքում, բարձրացե՛ք ամենաբարձր հարկը՝ խուսափելով փակ տարածքներից, քանի որ ջրի մակարդակի բարձրացման դեպքում կարող է անհնարին դառնալ դուրս գալը:

Թույլ մի՛ տվեք երեխաներին մտնել հոսող կամ կանգնած ջրի մեջ: Նույնիսկ եթե նկուղում ջուրը քիչ քանակությամբ է, դա կարող է վտանգել ձեր երեխայի առողջությունը:



Ի՞նչ անել ջրհեղեղից հետո

- Ուշադիր հետախուզե՛ք կացարանի հիմքի ամբողջությունը, պատերի, պատուհանների և հատակի վիճակը, հաղորդակցության համակարգը:
- Ստուգե՛ք սննդի պիտանելիությունը, օգտագործելուց առաջ լվացե՛ք եռացրած ջրով:
- Խմելու ջուրն օգտագործե՛ք սանիտարական ստուգումից կամ եռացնելուց հետո:
- Չօգտագործե՛ք ջրում հայտնված սննդամթերքը:
- Նախքան հաղորդակցության համակարգերից օգտվելը, ստուգե՛ք դրանց վնասվածության աստիճանը:
- Մի՛ մնացեք այն տանը, որը վթարային է կամ վստահություն չի ներշնչում:



Տեղեկացրե՛ք ձեր սիրելիներին

Ապահով վայր հասնելուն պես կապի միջոցների հասանելիության պարագայում անպայման տեղեկացրե՛ք ձեր ընտանիքի անդամներին կամ ձեր մերձավորներին:



ՔԱՐԱԹԱՓՈՒՄ

Լեռների և ձորերի զառիվայր ու զառիթափ լանջերից խոշոր, հաճախ հսկայական չափերի ապարազանգվածների պոկումն ու փլուզումն է, որն առաջանում է գլխավորապես լեռնային ապարների հողմահարության ընթացքների և մակերևութային ու ստորգետնյա ջրերի ներգործությունից՝ դրանց կապակցվածության թուլացման հետևանքով:

Կարևոր է իմանալ, որ քարաթափումները վտանգավոր են շրջակա միջավայրի և մարդկանց համար. դրանց հետևանքով կարող են վնասվել ավտոճանապարհներ, շինություններ, ենթակառուցվածքներ:



Քարաթափման պատճառները

- երկարատև տեղումները
- ջերմաստիճանի կտրուկ փոփոխությունները (սառեցում/հալոցք)
- ստորգետնյա ջրերի հոսքերի փոփոխությունները
- ապարների և շրջակա նյութերի էրոզիան
- երկրաշարժերը

Հիշե՛ք, որ քարաթափման պատճառները նվազեցնում են ժայռերի ամրությունը և կայունությունը, ինչը բարձրացնում է քարաթափման վտանգը: Քարաթափման ռիսկը կարող է տեղի ունենալ քարերի կամ ժայռերի մասերի սահելու, շրջվելու կամ ընկնելու պատճառով:

Ի՞նչ անել քարաթափման ժամանակ

- Վտանգի դեպքում անմիջապես տեղեկացրե՛ք պատասխանատու մարմիններին՝ անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկելու համար:
- Արագ հեռացե՛ք վտանգավոր տարածքից և շարժվե՛ք դեպի անվտանգ տեղ՝ խուսափելով ընկնող քարերից:
- Պաշտպանվե՛ք թափվող քարերից՝ արագ կողմնորոշվելով ու ապաստան գտնելով, հեռացե՛ք վտանգավոր վայրից:
- Եթե, ըստ պաշտոնական տեղեկատվության, ճանապարհը կամ դրա հատվածը գտնվում է քարաթափման վտանգի գոտում, անմիջապես օգտագործվող տրանսպորտային միջոցով շարժվե՛ք դեպի մոտակա անվտանգ տարածք:
- Խուսափե՛ք բարձր և զառիթափ տարածքներից, հատկապես վատ եղանակային պայմաններում, քանի որ քարաթափման վտանգ կա:
- Հետևե՛ք օդերևութաբանների կանխատեսումներին և պաշտոնական տեղեկատվությանը:





ՍՈՂԱՆՔ

Սողանքը հողի կամ լեռնային ապարների տեղաշարժն է լանջով, սեփական ծանրության ուժի ազդեցությամբ:

Այն կարող է տեղի ունենալ հանկարծակի, երբ տեղաշարժն արագ է, կամ ավելի դանդաղ, երբ սողանքը զարգանում է երկար ժամանակահատվածում:

Սողանքները կարող են հանգեցնել ենթակառուցվածքների վնասման, շենքերի ավերածությունների և մարդկային զոհերի:

Կարևոր է իմանալ, որ սողանքներ կարող են առաջանալ մարդու գործունեության պատճառով, երբ առանց տեղանքի լուրջ մասնագիտական հետազոտությունների և հաշվարկների իրականացվում է կառուցապատում (երկաթուղի, ավտոճանապարհ, շենք, շինություններ և այլն), անտառահատում, շռայլ ոռոգում և այլն:

Ազդող գործոններ

Սողանքի հավանականությունը մեծանում է հետևյալ դեպքերում.

- երկրաշարժերի և պայթյունների ժամանակ, երբ գրանցվում են ցնցումներ,
- լանջի հիմքի երոզիայի արդյունքում, որը նվազեցնում է հողի կայունությունը,
- եղանակային պայմանների փոփոխությունները, որոնք ազդում են հողի կառուցվածքի վրա:

Կանխարգելիչ միջոցառումներ

- Ուսումնասիրե՛ք սողանքների առաջացման հավանական վայրերն ու նրանց սահմանները՝ վտանգները ճիշտ գնահատելու համար:
- Փորձե՛ք խուսափել սողանքավտանգ լանջերը ծանրաբեռնելուց՝ շենքեր կամ շինություններ կառուցելով:
- Խնայե՛ք լանջերի բուսականությունը: Անտառահատումները կարող են թուլացնել հողը և մեծացնել սողանքի հավանականությունը:
- Այգիներ կամ դարավանդներ ստեղծելիս ուշադրություն դարձրե՛ք ջրահեռացման լավ համակարգի առկայությանը, որպեսզի կանխվի ջրի ներթափանցումը կավային շերտեր:
- Ժամանակին մաքրե՛ք սելավատարերը, ինչպես նաև կառուցե՛ք արդյունավետ ջրահեռացման և կոյուղու համակարգեր:
- Լանջի հատումը պլանավորելիս զգուշություն ցուցաբերե՛ք՝ հատկապես սողանքավտանգ հատվածների ներքին մասերում:




Ի՞նչ անել սողանքի դեպքում

- Անջատե՛ք էլեկտրական սարքերը, գազամատակարարումը ու ջրամատակարարումը, պատրաստվե՛ք տարահանման:
- Գործե՛ք ըստ սողանքի տեղաշարժի արագության:
- Տարահանման ժամանակ վերցրե՛ք անհրաժեշտ փաստաթղթեր, թանկարժեք իրեր, տաք հագուստ, սնունդ և դեղորայք:
- Աջակցե՛ք փրկարարներին տուժածներին փլատակներից դուրս բերելու և օգնություն ցուցաբերելու գործում:



ԵՐԿՐԱՇԱՐԺ

Երկրաշարժը երկրի մակերևույթի տատանումներն են՝ պայմանավորված սեյսմիկ ալիքների տարածմամբ: Դրանից առաջացած սեյսմիկ ալիքները տարածվում են ձայնային ալիքների նման: Հեռավորությունից կախված՝ ալիքների ուժգնությունը նվազում է: Երկրաշարժի ծագման օջախը (սովորաբար երկրի մակերեսից որոշ խորության վրա), որտեղից սկսվում են սկզբնական ցնցումները՝ կոչվում է Հիպոկենտրոն, իսկ երկրի մակերեսի այն կետը, որը գտնվում է երկրաշարժի օջախի կենտրոնի վրա՝ անվանում են Էպիկենտրոն: Երկրաշարժի մագնիտուդը երկրաշարժի ժամանակ սեյսմիկ ալիքների տեսքով անջատվող էներգիան բնութագրող մեծությունն է:



Երկրաշարժավտանգ երկրներում բազմաթիվ զոհերի պատճառը տարրական վարքականոնների չիմացությունն է:



Ի՞նչ անել նախքան երկրաշարժը

- Պլանավորե՛ք, թե ինչպես եք երկրաշարժի դեպքում պաշտպանելու ձեզ, ձեր մերձավորներին ու ընտանի կենդանիներին:
- Որոշե՛ք ձեր տան կամ բնակարանի անվտանգ հատվածներ, որտեղ չկան հեշտ ընկնող ծանր իրեր, չամրացված կահույք, էլեկտրական սարքեր, որոնք ընկնելու դեպքում կարող են վնասել ձեզ: Անվտանգ տեղերը հնարավորինս մոտ պետք է լինեն շենքի հիմնապատին:
- Եթե կարող եք, ժամանակ առ ժամանակ, ձեր ընտանիքի հետ անցկացրեք «պառկի՛ր - մտի՛ր ծածկի տակ - մնա՛» վարժությունը, մինչև այն ռեֆլեքսի աստիճանի հասցնեք: Պառկե՛ք գետնին, քանի որ ուժեղ ցնցումների ժամանակ կանգնած լինելով՝ ընկնելու և վնասվելու ռիսկը մեծ է:
- Սողացե՛ք մոտակա սեղանի տակ, որ ձեզ վրա իրեր չընկնեն:



Հիշե՛ք. եթե ընտանիքի բոլոր անդամները գիտեն, թե ինչ անել երկրաշարժի ժամանակ, ստիպված չեք լինի անհանգստանալ ու բոլորին մի տեղ հավաքել: Դա կարող է ձեր ու ընտանիքի անդամների կյանքերը փրկել:

- Գտե՛ք ու ուղղե՛ք երկրաշարժի դեպքում ձեր տան վտանգավոր կետերը: Որտեղ կան հեշտ ընկնող ծանր իրեր, չֆիքսված կահույք, էլեկտրական սարքեր, որոնք կարող են մարդկանց վնասել ու հրդեհի պատճառ դառնալ:
- Հնարավորինս հասանելի պահե՛ք արտակարգ իրավիճակների կապոցն ու, հնարավորության դեպքում, դժվար փչացող սնունդն ու շշալցված ջրի պաշարը:



- Եթե դրսում եք, մնացե՛ք բաց տարածքում, որտեղ չկան ծառեր, շենքեր ու հոսանքալարեր, քանի որ երեքն էլ կարող են ձեզ համար վտանգ ներկայացնել:
- Եթե մեքենայի մեջ եք, կա՛նգ առեք բաց վայրում, բայց ոչ ծառերի տակ կամ շենքերի մոտակայքում: Մնացե՛ք մեքենայի մեջ: Մեքենա մի՛ վարեք երկրաշարժի ընթացքում:
- Ցնցումների ավարտից հետո մի՛ օգտվեք վերելակից: Աստիճաններն ավելի անվտանգ են:

Ի՞նչ անել երկրաշարժի ժամանակ

Եթե առաջին կամ երկրորդ հարկում եք, անմիջապես հեռացե՛ք շենքից և դուր՛ս եկեք բաց տարածք:

Եթե վերին հարկերում եք կամ չեք հասցրել դուրս գալ ներքևի հարկերից, ապա՝

- պառկե՛ք գետնին կամ չորեքթաթ դիրքի եկե՛ք, այդպես ավելի հեշտ ու անվտանգ է տեղաշարժվելը:
- մտե՛ք ծածկի տակ, լինի դա ճաշասենյակի սեղան թե գրասեղան:
- մնացե՛ք տեղում, մինչև ցնցումները դադարեն:
- հնարավորության դեպքում բացե՛ք դրսի դուռը, անջատե՛ք գազամատակարարումը, ջրամատակարարումը և հոսանքը:





Ի՞նչ անել երկրաշարժից հետո



Հիշե՛ք, որ նույնիսկ ավերիչ երկրաշարժի դեպքում շենքերը միանգամից չեն փլուզվում: Գյումրիի (9 բալ) ավերածությունների վերլուծությունը ցույց տվեց, որ 10 հարկանի շենքերը սկսել են փլուզվել առաջին ցնցումից 10-12 վայրկյան հետո: Դա այն ժամանակն է, որի ընթացքում փրկվելու համար որոշակի գործողություններ կկարողանաք ձեռնարկել:

Հիշե՛ք, որ երեխաները, ծերերը և հիվանդները ձեր օգնության կարիքն ունեն: Նրանց կարիքները հոգալով՝ դուք չեք երկյուղի ձեր կյանքի համար և կարող եք ավելի հավասարակշռված գործել:

Հիշե՛ք, ձեզ որոնում են և ձեր փրկության համար կօգտագործվեն բոլոր հնարավորությունները:

- Ստուգե՛ք, արդյոք դուք և մնացածը վնասվածքներ ստացել եք, թե ոչ:
- Առաջին օգնություն ցուցաբերե՛ք բոլորին, ովքեր դրա կարիքն ունեն:
- Ստուգե՛ք, արդյոք գազը, ջուրը, էլեկտրականության գծերը վնասվել են, թե ոչ: Գազի արտահոսքի հայտնաբերման սարքը պետք է աշխատի: Եթե գազի հոս եք առնում, բացե՛ք բոլոր պատուհաններն ու դռները, անմիջապես լքե՛ք տարածքը, զանգահարե՛ք 1-04 (գազի վթարային ծառայություն):
- Զգուշացե՛ք փշրված ապակուց և սուր բեկորներից:
- Մի՛ ծխեք շենքի ներսում:
- Մի՛ մտեք վնասված ու վթարային շենքեր:
- Զանգահարե՛ք 911 ու 103, եթե լուրջ վնասվածքներով մարդիկ կան, բայց մի՛ զբաղեցրեք այդ ծառայությունների հեռախոսահամարներն առանց լուրջ պատճառի:





ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՐԴԵՀՆԵՐ

Անտառային հրդեհը բուսականության անվերահսկելի այրումն է, որը տարերայնորեն տարածվում է անտառային տարածքում: Անտառային հրդեհները մեծ վնաս են հասցնում տնտեսությանը, փչացնում են փայտանյութը, նվազեցնում հողի բերրիությունը, ազդում ծառերի հետագա աճի վրա և սանիտարահիգիենիկ վիճակի վատթարացմանը:

Որո՞նք են անտառային հրդեհների տեսակները

- **Գետնատարած** (այրում է անտառի չոր խոտը, ճյուղերը և թափված տերևները)
- **Ստորգետնյա կամ տորֆային** (բարդ է հայտնաբերել և հաճախ երկար ժամանակ մնում է հողի տակ)
- **Վերնատարած** (արագ տարածվող և վտանգավոր հրդեհներ, որոնք տարածվում են ծառերի գագաթներով):

Որո՞նք են անտառային հրդեհների առաջացման պատճառները

Ըստ համաշխարհային վիճակագրության՝ անտառային հրդեհների 4%-ը կարող են առաջանալ բնական պատճառներից, ինչպիսիք են՝ կայծակի ուղիղ հարված, չորային եղանակ, սաստիկ շոգ, իսկ մնացած 96%-ի դեպքում՝ մարդկային գործունեության արդյունքում:





Ինչպե՞ս են ազդում անտառային հրդեհները շրջակա միջավայրի վրա

Անտառային հրդեհները կարող են ազդել շրջակա միջավայրի վրա մի քանի եղանակով, օրինակ՝ բուսականության և նոր բուսատեսակների աճի խթանում, սնունդ և նոր միջավայր կենդանիների համար, կենդանիների տեղաշարժ, հողի հատկությունների փոփոխություն և այլն:

Չնայած այդ բոլոր բացասական ազդեցություններին՝ հրդեհները նաև ունեն բնական գործառույթ, քանի որ նպաստում են որոշ էկոհամակարգերի վերականգնմանը:



Ինչպե՞ս կանխարգելել անտառային հրդեհները

Հրդեհավտանգ ժամանակահատվածներում անտառային և բուսածածկ տարածքներում հրդեհների կանխարգելման նպատակով պետք է պահպանել անվտանգության կանոնները:

Մասնավորապես արգելվում է՝

- վառել խարույկ արգելված վայրերում,
- լքել անտառն առանց համոզվելու, որ խարույկը մարված է,
- նետել այրվող լուցկի, չմարված ծխախոտի մնացորդ,
- ավտոմեքենաները լիցքավորել վառելիքով՝ աշխատող շարժիչների դեպքում,
- շահագործել անսարք սնուցման համակարգով ավտոմեքենաները,
- կատարել չոր խոտի, խոզանի այրում (բացի վերահսկելի այրումներից),
- արևով լուսավորվող բացատներում թողնել շշեր, ապակու կտորներ,
- թողնել (թափել) դյուրավառ հեղուկներով ներծծված լաթեր (բացի հատուկ հատկացված տեղերից) և այլն:

Հիշե՛ք, որ անտառներում հրդեհային անվտանգության կանոնների խախտման համար նախատեսված է վարչական և քրեական պատասխանատվություն:

Ինչպե՞ս կառավարել անտառային հրդեհները

Վերջին տասնամյակներին, անտառային հրդեհների կառավարման հիմնական մեթոդ են եղել մարումը, վերահսկումն ու կանխարգելումը: Հրշեջներն անտառային հրդեհները մարում են տարբեր տեխնիկաների, սարքավորումների միջոցով և մեթոդներով՝ կախված հրդեհի մեծությունից, տեղանքից և այլ պայմաններից: Հաճախ օգտագործվում են ջուր, քիմիական կամ ջերմակայուն նյութեր և օդային համակարգեր (ուղղաթիռները և ինքնաթիռները ջուր կամ հատուկ նյութեր լցնելու համար), ինչպես նաև կիրառվում են հատուկ մարտավարություն՝ կրակի տարածումը դանդաղեցնելու կամ մարելու նպատակով:



ՁՆԱԲՈՒՔ




Մարդկանց մեծամասնությունը ձնաբուքը համարում է սաստիկ բուքը, սակայն այն պետք է համապատասխանի որոշակի չափանիշների՝ ձնաբքի դասակարգման համար: Ձնաբուքը վտանգավոր օդերևութաբանական երևույթ է, որը բնորոշվում է ուժեղ քամիներով, առատ ձյան տեղումներով և ցածր տեսանելիությամբ: Այն կարող է առաջացնել լուրջ աղետներ՝ հատկապես լեռնային և հյուսիսային շրջաններում:

Որո՞նք են ձնաբքի առաջացման պատճառները

Ձնաբքի պատճառները հիմնականում կապված են տարբեր եղանակային գործոնների հետ, որոնք ստեղծում են ուժեղ քամիներ, ձյան տեղումներ և ցածր տեսանելիություն:

Հիմնական պատճառներն են.

- Ցրտաշունչ օդը, երբ ջերմաստիճանը շատ ցածր է, ձյունը կարող է քշվել դեպի մակերևույթ՝ առաջացնելով բուք:
- Ձյան ինտենսիվ տեղումները (մոտ 5 սմ կամ ավելի) նպաստում են ձնաբքի ձևավորմանը:
- Ուժեղ քամիները, որոնք 12 և ավելի ժամվա ընթացքում հասնում են 15 մ/վ և ավելի արագության:
- 500 մետրից պակաս տեսանելիության պայմանով:
- Ցածր ճնշումը, որը տանում է մեծ քանակությամբ խոնավություն և ձյուն, կարող է միավորվել ուժեղ քամիների հետ՝ առաջացնելով ձնաբուք:
- Ջերմաստիճանի կտրուկ փոփոխությունը՝ չափազանց ցածր և բարձր ջերմաստիճանների միջև բախումը կարող է ձևավորել բքի երևույթներ:





Նախապատրաստական միջոցառումներ

Հետևե՛ք եղանակային կանխատեսումներին, որպեսզի տեղեկանաք սպասվող ձնաբքի մասին:

Ապահովե՛ք անհրաժեշտ պաշարներ՝ սնունդ, ջուր, տաք հագուստ, լապտեր, մարտկոցներ:

Մնացե՛ք տանը կամ անվտանգ տարածքում, հատկապես ուժեղ բքի ժամանակ: Խուսափե՛ք տնից դուրս գալուց, հատկապես մեքենայով:

Պարբերաբար մաքրե՛ք ճանապարհները, մայրերը և բակերը ձնից ու սառույցից:

Մեծ վտանգի դեպքում օգտագործե՛ք աղ, ավազ կամ հատուկ նյութեր՝ սառույցի առաջացումը կանխելու համար:

Պահե՛ք հեռախոսները լիցքավորված:



Անհրաժեշտության դեպքում զանգահարե՛ք ՆԳՆ փրկարար ծառայություն, ոստիկանություն կամ շտապօգնություն:

Ի՞նչ անել ձնաբքի ժամանակ

Մնացե՛ք տաք տարածքում՝ ցրտահարությունից խուսափելու համար:

Հավաքե՛ք առաջին անհրաժեշտության պարագաներ:

Խմե՛ք տաք հեղուկներ, բայց խուսափե՛ք սուրճից ու ալկոհոլից:

Հնարավորության դեպքում խուսափե՛ք ճանապարհորդությունից:

Տնից դուրս գալուց հագե՛ք ճիշտ հագուստ՝ վերարկու, գլխարկ, ձեռնոցներ, ջրակայուն կոշիկներ: Ծածկե՛ք դեմքը, բերանը, ականջները, այտերը, կզակը, մատները և ոտքի մատները:

Դանդաղ ու ուշադիր քայլե՛ք, ձեռքերը ազատ պահե՛ք սառցակալած կամ ձյունածածկ տարածքներում՝ հավանական շեղումներից խուսափելու համար:



Համոզվե՛ք, որ ձեր մտերիմները՝ մեծահասակները, նորածինները և հատուկ կարիքներ ունեցող անձինք ապահով և անվտանգ տարածքում են:



ՍԵԼԱԿ

Սելավը ջրի, հողի, լեռնային ապարների և տիղմի սրընթաց հոսք է, որն առաջանում է լեռնային գետերի ավազաններում, տևական անձրևների, ձյան կամ սառցապատ տարածքների ինտենսիվ հալոցք, ջրամբարի պատվարների փլուզման հետևանքով:

Հայաստանի տարածքներում սելավային երևույթների 75%-ը բաժին է ընկնում 1800-2800 մ բարձրություններին՝ կապված տեղատարափ անձրևների, կարկուտի, հազվադեպ ձնհալքի հետ: Հայաստանի սելավային ավազաններն ու հոսքերը լինում են տարբեր սելավաբերության, ձևավորման հաճախականության, հոսքի պինդ նյութով հագեցածության:

Սելավները մեծ վնաս են հասցնում գյուղատնտեսությանը՝ հողերի լվացմամբ, ձորակների առաջացմամբ, հողատարածքները բերվածքներով ծածկելով:

Սելավային հոսքերը ջրային էրոզիայի առավել ցայտուն, իսկ Հայաստանի տարածքում նաև անապատացման հզոր գործոններից են: Հողի էրոզիան սկսվում է տեղատարափ անձրևների թափվելու ընթացքում և վերջանում սելավների ձևավորմամբ, որոնք իրենց բերվածքներով աղտոտում են գետերը, խցանում դրանց հուններն ու ծածկում գետահովիտների առափնյա հողերը:



Որո՞նք են սելավին նպաստող գործոնները

- սելավատարի հունի փակումը,
- բուսածածկույթն արոտավայր ծառայեցնելը,
- հողի էրոզիան,
- ծառահատումները և այլն:



Սելավների դասակարգումը

Հաշվի առնելով սելավաբերության աստիճանը, մասշտաբները, գործելու հաճախականությունը, սելավային զանգվածների պինդ բաղադրիչի քանակն ու բնույթը՝ առանձնացվում են.

- առաջին կարգի վտանգավորության՝ ուժեղ կամ միջին սելավաբերությամբ,
- երկրորդ կարգի վտանգավորության՝ միջին մասշտաբի սելավաբերությամբ, միջին հաճախականությամբ (մինչև 10 տարի),
- երրորդ կարգի վտանգավորության՝ թույլ սելավաբերությամբ և ցածր հաճախականությամբ:



Սելավի դեմ պայքարի միջոցներ

Սելավի դեմ պայքարի հիմնական միջոցներն են հողաբուսածածկույթի ամրացումն ու պահպանումը, լեռնալանջերի անտառապատումը, գետահունների կանոնավորումն ու ամբարտակումը և այլ ջրատեխնիկական միջոցառումներ: Անհրաժեշտ է սահմանափակել գործունեությունը սելավավտանգ տարածքում. չի կարելի շինարարություն կատարել, լանջերի վրա ոչխար արածեցնել, քանի որ ոչխարներն իրենց նեղ կճղակներով փխրեցնում են լանջի մակերևույթը, արմատախիլ անում բույսերը:

Ինչպե՞ս գործել սելավի դեպքում

Եթե ջրի հոսանքի խորությունը 15սմ է կամ ավելի, ապա չփորձել անցնել դրա միջով, այդ թվում չանցկացնել անասուններին (քանի որ ջրի մեջ լողացող հարվածող մարմինները կարող են վնաս հասցնել):

Սելավի դեպքում պետք է հետևել ազդարարման ազդանշաններին, խուսափել ճանապարհի սելավատար հատվածներով երթևեկելուց, արագ տեղափոխվել անվտանգ տեղեր՝ գետերի հովիտներից և կիրճերից հեռու:



Ինչպե՞ս գործել սելավից հետո

- անհրաժեշտ է մաքրել սելավատարը,
- սելավատարում կենցաղային աղբ չթափել,
- սելավներ բերող ձորերում ծառահատումներ և թփահատումներ չկատարել:



ԿԱՅԾԱԿ

Կայծակը մթնոլորտային երևույթ է, որի ժամանակ անձրևային կամ կարկտային ամպերի միջև, կամ ամպի ու երկրի մակերևույթի միջև առաջանում են կայծակներ:

Ամպրոպաբեր ամպը էլեկտրականության վիթխարի կուտակիչ է: Ամպի ստորին մասում կուտակվում են բացասական, իսկ վերին մասում՝ դրական լիցքեր: Ուժեղ ամպրոպներ լինում են հատկապես լեռներում:


Կայծակն իրենից ներկայացնում է էլեկտրական լիցքերի պարպում, որը տեղի է ունենում տարբեր նշանով լիցքավորված ամպերի կամ ամպի և երկրի մակերևույթի միջև:

Կայծակի բացասական ազդեցությունը բնակավայրերում մեղմելու, չեզոցացնելու կամ պաշտպանելու համար՝ լայնորեն կիրառվող միջոց է շանթարգելը (մետաղյա հատուկ ձող է, որը հատուկ հաղորդիչներով հողակցում են և տեղադրվում է տեղանքի ամենաբարձր կետում): Սա կայծակից պաշտպանվելու ամենահուսալի միջոցն է, քանի որ կայծակը «սիրում է» հարվածել այն ամենին, ինչն ամենաբարձրն է և լավ հաղորդակցված:

Շանթարգելն իր վրա է վերցնում կայծակի հիմնական հարվածները: Ցանկալի է, որ վառարանների մետաղյա ծխնելույզը, հեռուստացույցի ալեհավաքները, անձրևաջրերի ջրհորդան խողովակներն ու տանիք տանող մետաղյա աստիճանները ևս հողակցվեն:

Որո՞նք են կայծակի տեսակները

- գծային
- ոչ գծային,
- գնդաձև



Որո՞նք են կայծակի բնութագրիչները

- դրա երկարությունը,
- ուղու լայնությունը,
- հոսանքի ուժը (ամպեր),
- լարումը (վոլտ),
- ամպրոպի տևողությունը:

Ի՞նչ անել կայծակի ժամանակ

- Անմիջապես պառկե՛ք կամ նստե՛ք ամենամոտ փոսի մեջ և ձեռքերով գրկե՛ք ոտքերը, եթե ամպրոպի ժամանակ գտնվում եք բաց ու հարթ տեղանքում:
- Չի՛ կարելի թաքնվել ցածր ծառերի տակ, ինչպես նաև կանգնել բարձր ծառերի տակ:
- Շտապ հեռացե՛ք անտառի այդ հատվածից, եթե նկատում եք ճեղքված և ածխացած ծառեր (նախկինում կայծակնահարված):
- Հանե՛ք խոնավ հագուստը:
- Հեռու մնացե՛ք մետաղական կոնստրուկցիաներից:
- Չի՛ կարելի գտնվել ջրի մակերևույթին, լողալ, գտնվել բաց լողափին և ձուկ որսալ: Որքան հնարավոր է հեռացե՛ք ջրի ափից:
- Չի՛ կարելի կայծակից թաքնվել ցախանոցում կամ խոտի դեզի մեջ:
- Թաքնվե՛ք մոտակա քարանձավում, բայց քարանձավի մուտքի և պատերի մոտ պետք չէ կանգնել:
- Փակե՛ք բոլոր պատուհանները, դռները, օդափոխության անցքերը, եթե տանն եք:
- Չի՛ կարելի վառարան վառել:
- Չի՛ կարելի մոտենալ պատուհաններին, բարձրանալ ձեղնահարկ: Առանց ծայրահեղ անհրաժեշտության չի՛ կարելի դուրս գալ:
- Չի՛ կարելի խոսել հեռախոսով: Դուք կարող եք էլեկտրահարվել:
- Չի՛ թույլատրվում միացնել ռադիոն, հեռուստացույցը և այլ էլեկտրասարքավորումներ: Ճիշտ կլինի դրանց խրոցները հանել վարդակներից:
- Չի՛ կարելի դիպչել այն ամենին, ինչը կապված է դրսի հետ՝ ջրի ծորակին, ջեռուցման մարտկոցներին և այլն:



Առաջին օգնությունը կայծակնահարվածներին

Տուժածը պետք է հնարավորինս շուտ ստանա բժշկական օգնություն, քանի որ կայծակի հարվածը կարող է վտանգավոր լինել կյանքի համար: Խուսափե՛ք ավելորդ վախից ու սթրեսից և, եթե տուժածը գտնվում է անգիտակից վիճակում, կատարե՛ք հետևյալ քայլերը:



- Արհեստական շնչառություն և սրտի անուղղակի մերսում:
- Բերել կողքային անվտանգ դիրքի:
- Անպայման բացել շնչուղիները:
- Պարբերաբար բերանը մաքրել թքից, արյունից և փսխման զանգվածներից ցուցամատին փաթաթած թաշկինակով կամ բինտով:
- Դադարեցնել արնահոսությունը, դնել այրվածքներին վարակազերծ (ստերիլ) վիրակապ, անշարժեցնել կոտրվածքները:
- Գիտակցությունը վերականգնվելուց հետո տալ մեծ քանակությամբ տաք թեյ կամ այլ հեղուկներ:
- Չի՛ կարելի սուրճ տալ:



ԿԱՐԿՈՒՏ

Կարկուտը հիդրոդերևութաբանական վտանգավոր երևույթ է, որն արտահայտվում է որպես պինդ մթնոլորտային տեղում՝ սառցե գնդաձև հատիկների տեսքով:


Կարկտաբեր ամպեր հիմնականում ձևավորվում են լեռնային գոտիներում: Այս տեսանկյունից Հայաստանը համարվում է աշխարհի կարկտավտանգ տարածքներից մեկը:

Կարկտահարությունից ամենախոցելի ոլորտը գյուղատնտեսությունն է: Այն նաև պարբերաբար վնաս է հասցնում բնակավայրերին և ենթակառուցվածքներին: Որպես երկրորդային հետևանք՝ առաջացում է այլ վտանգներ, այնպիսին ինչպիսին է սելավը:

Կարկուտի երակն ունենում է 200 մ-ից մինչև 2 կմ լայնություն և երբեմն՝ մինչև 100 կմ երկարություն:

Տևողությունը, որպես կանոն, 5-10 րոպե է, բացառիկ դեպքում՝ 1 ժամ:

Կարկտահատիկն ունի շերտավոր կառուցվածք: Մինչև 20մմ տրամագծի դեպքում կարկուտը համարվում է օդերևութաբանական վտանգավոր երևույթ, 20 մմ-ից ավելիի դեպքում՝ խիստ վտանգավոր:





Կարկուտի բացասական ազդեցությունը կանխելու կամ կանխարգելելու համար կիրառվում են **ակտիվ** և **պասիվ** մեթոդներ:

Կարկուտի բացասական ազդեցությունը նվազեցնելու ակտիվ մեթոդներն ուղղված են կարկտագոյացման գործընթացի վրա ազդելուն:

Կարկուտային ամպի վրա ազդանյութերով **ակտիվ** ազդեցության լայնորեն կիրառվող եղանակներն են.

- Հրթիռային (արդյունավետությունը 70%)
- Ավիացիոն (արդյունավետությունը 50%)
- Գազագեներատորային (արդյունավետությունը 50%)
- Քիմիական ռեագենտով գործող գեներատորային (արդյունավետությունը 50%):

Ներկայումս, ՀՀ-ում կիրառվում են միայն պրոպան-բութանի խառնուրդ ազդանյութով գազագեներատորային կարկտապաշտպան կայանները:

Պասիվ մեթոդներն ուղղված են կարկուտի դեպքում՝ հիմնականում բերքը պաշտպանելուն: Այսպիսի մեթոդ է կակտապաշտպան ցանցերի կիրառումը:

Նաև որպես պասիվ պայքարի մեթոդ առաջարկվում է կարկտավտանգ տարածքներում կարկուտի նկատմամբ առավել դիմացկուն մշակաբույսերի աճեցումը:



Ի՞նչ անել կարկուտի ժամանակ

- Եթե դրսում եք, անհապաղ պատսպարվե՛ք (ամենաապահով վայրը շենք, շինություններն են, որպես թաքստոց կարող եք օգտագործել նաև ծակ):
- Փակե՛ք տան դռները և պատուհանները:
- Հեռու կանգնե՛ք պատուհաններից:
- Մեքենաները կայանե՛ք ավտոտնակներում (հնարավորության դեպքում):
- Եթե մոտակայքում չկա պատսպարվելու վայր (օրինակ՝ բաց դաշտում եք), պաշտապանե՛ք ձեր գլուխը ձեռքի տակ եղած միջոցներով (պայուսակ, վերարկու, այլ իրեր կամ ձեռքերով):
- Եթե մեքենայում եք, կանգնեցրե՛ք այն (ցանկալի է գտնել որևէ ծածկ, օրինակ՝ ծառ, եթե կարկուտը չի ուղեկցվում ուժեղ քամիներով), սպասե՛ք մինչև կարկուտի ավարտվելը: Վտանգավոր է մեքենա վարել կարկուտի ժամանակ, քանի որ տեսանելիությունը սովորաբար շատ ցածր է լինում: Կարկուտը կարող է նաև մեքենայի սահելու պատճառ դառնալ:





ՈՒԺԵՂ ՔԱՄԻ

Քամիները բնական երևույթ են, որոնք տեղի են ունենում նաև մեր մոլորակի տարբեր մասերում տարբեր հիմնական պատճառներով: Ուժեղ քամիներ են համարվում 25 մ/վ և ավել արագություն ունեցող քամիները:

Ուժեղ քամիները կարող են վնասել խոշոր կառույցներ (տներ, ծառեր, էլեկտրալարեր), դուրս բերել նրանց տեղերից կամ վնասել գյուղատնտեսական մշակաբույսերը: Դրանք նաև կարող են ստեղծել բարձր ալիքներ, հեղեղներ կամ փչացնել ճանապարհները:



Որո՞նք են կանխարգելման աշխատանքները

Ուժեղ քամիների վտանգը կանխելու կամ նրանց վնասները նվազեցնելու համար պետք են որոշակի կանխարգելիչ աշխատանքներ: Այս աշխատանքները կարող են լինել, ինչպես տեղական մակարդակով, այնպես էլ ամբողջ տարածաշրջանում կամ երկրում:

- Հետևե՛ք եղանակի տեսությանը, ճիշտ ժամանակին ձեռնարկե՛ք միջոցառումներ, նախապատրաստվե՛ք ուժեղ քամիներին:
- Ամրացնե՛ք, վերանորոգե՛ք տանիքները:
- Քամիների ուժը կտրտելու համար հիմնե՛ք քամապաշտպան ծառաշերտերի:
- Թաղանթապատե՛ք պատուհանների ապակիները և այլն:



Ի՞նչ անել ուժեղ քամու դեպքում

- Շենքում գտնվելիս ամուր փակե՛ք պատուհանները և հեռու մնացե՛ք դրանցից,
- դրսում գտնվելիս մտե՛ք մոտակա շենքեր, ապաստարաններ, իսկ բնության մեջ գտնվելիս՝ պաշտպանվե՛ք ձորակներում, փոսերում, փոսորակներում, առվակներում, հզոր ժայռաբեկորների արանքում. կամուրջների առկայության դեպքում պատսպարվե՛ք դրանց տակ,
- հեռու մնացե՛ք էլեկտրասյուններից, լարերից, էլեկտրակայաններից,
- դուրս եկե՛ք փոխադրամիջոցներից և պատսպարվե՛ք մոտակա նկուղներում, ապաստարաններում կամ ցանկացած փոսում, եթե նշվածները կան, եթե չկան՝ մնացե՛ք մեքենայում, փակե՛ք դռները և պատուհանները, իսկ մեքենան կանգնեցրե՛ք տարածքի ամենաանվտանգ, քամուց պաշտպանված հատվածում,
- հեռու մնացե՛ք ծառերից (հատկապես՝ հաստաբուն, բարձր և տարեց) և շինության այն հատվածից, որի վրա հավանականություն կա, որ կարող է քամու հետևանքով այդ ծառն ընկնել,
- հնարավորության դեպքում՝ հետևե՛ք պատկան մարմինների հաղորդագրություններին:



Հիշե՛ք, որ ուժեղ քամու հետևանքները հնարավոր է նվազեցնել միայն համապատասխան նախապատրաստությամբ և անվտանգության կանոնների խստորեն պահպանմամբ:

Սույն ուղեցույցը մշակվել է ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության նախաձեռնությամբ և տպագրվել Աղետների պատրաստվածության 2025-2026 թթ. ծրագրի շրջանակներում՝ Եվրոպական միության և ՄԱԿ-ի Փախստականների գործակալության ֆինանսավորմամբ՝ իր գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցությամբ:

Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության, ՄԱԿ-ի Փախստականների գործակալության, կամ գործընկեր կազմակերպությունների տեսակետները: Ո՛չ Եվրոպական միությունը, ո՛չ լիազորված կողմը չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

This guidebook was developed by the initiative of of the Rescue Service of the RA MIA and published within the framework of the 2025-2026 disaster preparedness program by the funding of the European Union and UNHCR, the UN Refugee Agency in cooperation with its partner organizations.

The views and opinions expressed are, however, those of the author(s) alone and do not necessarily reflect those of the EU, the UNHCR, or partner organizations. Neither the EU, nor the granting authority can be held responsible for them.

